ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ
«ԹԱՓԱՌՈՂ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՎՆԱՍԱԶԵՐԾՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

0010, ք.Երևան, Փ. Բուզանդի փ. 1/3 շենք
Քաղաքապետարանի 2-րդ մասնաշենք
Էլ. փոստ: yerevan.cnsa@gmail.com

ՀՎՀՀ 00482795
Հ/Հ 220315140164000, Ակբաբանկ
Հեռ. +37411 514 539

11 օգոստոսի 2020թ.

«Աբամա-Թրեյդ» ՍՊԸ-ի
տնօրեն՝ Է. Փոթոյանին

Հարգելի Է. Փոթոյան,

Հայտնում ենք Ձեզ, որ Երևանի քաղաքապետարանի «Թափառող կենդանիների վնասազերծման կենտրոն» ՀՈԱԿ-ի և «Աբամա-Թրեյդ» ՍՊԸ-ի միջև 10.06"2020 կնքված թիվ «ԹԿՎԿ-ԳՀԱՊՁԲ-2020/7-10» Պայմանագրի համաձայն, Վաճառողը՝ «Աբամա-Թրեյդ» ՍՊԸ-ն, ստանձնել է «Թափառող կենդանիների վնասազերծման կենտրոն» ՀՈԱԿ-ին մատակարարել կատաղության դեմ պատվաստանյութ:

«ԹԿՎԿ-ԳՀԱՊՁԲ-2020/7-10» Պայմանագիրն ուժի մեջ է մտել 23.06.2020թ-ին կողմերի միջև կնքված թիվ 1 Համաձայնագրով, որով ապրանքի մատակարարման վերջնաժամկետ է սահմանվել 28.07.2020 թվականը /25 աշխատանքային օր/, սակայն Վաճառողը սահմանված ժամկետում որևէ ապրանք չի մատակարարել:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է Պայմանագիրը, իսկ 2.1.7.1 կետի բ) ենթակետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝ ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

Հաշվի առնելով, որ «Աբամա-Թրեյդ» ՍՊԸ-ն մինչ օրս /11.08.2020թ/ չի կատարել ստանձնված պարտավորությունները և Պատվիրատուին չի մատակարարել նախատեսված ապրանքը, ուստի Պատվիրատուն որոշեց, հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7 կետը և 2.1.7.1 կետի բ) ենթակետը՝ 2020թ. օգոստոսի 11-ից Պայմանագիրը համարել միակողմանի լրիվ /ամբողջությամբ/ լուծված:

Հարկ ենք համարում նշել, որ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված՝ «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի՝ Պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ ծանուցումը սահմանված կարգով կհրապարակվի www.procurement.am պաշտոնական տեղեկագրում:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ հնարավոր տույժերի, տուգանքների և Պատվիրատուին պատճառված վնասների հատուցման վերաբերյալ «Աբամա-Թրեյդ» ՍՊԸ-ն լրացուցիչ կտեղեկացվի:

Տնօրենի ժ/պ՝ Հ. Աղաբեկյան